ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ANQA-2021/45**

# ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 մայիսի 2021 թ. N 45

## ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

### Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր,
Ուսանողական 9, Ուսանողական 9-1

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 05.05.21թ.-ի Հանձնաժողովի նիստում քննարկեց Վանաձորի պետակա գյուղատնտեսական քոլեջի (այսուհետ՝ ՄՈւՀ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

### Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

| | |
|---|---|
| **դիմում-հայտի ներկայացում** | 27 փետրվարի 2018 |
| **ինքնավերլուծության ներկայացում** | 29 հունիսի 2018 |
| **փորձագիտական այցի իրականացում** | 12-14 հունվարի 2020 |
| **փորձագիտական զեկույցի ներկայացում** | 24 հունվարի 2020 |
| **թերությունների վերացման ծրագրի ներկայացում** | 27 փետրվարի 2020 |

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Վանաձորի պետակա գյուղատնտեսական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Առկա են խնդիրներ և ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ առկա են:***

Քոլեջն ունի չորս գյուղատնտեսական կրթական ծրագրեր իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա, սակայն, դրանցից երեքը դիմորդներ չլինելու պատճառով չեն իրականացվում, մինչդեռ, նշված մասնագիտություններն իսկապես պահանջված են մարզում: ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը:

ՎՊԳՔ-ի ՄԿԾ-ները համահունչ են իր առաքելությանը և համապատասխանում են ՈԱՇ-ի բնութագրիչներին, սակայն լրամշակման կարիք ունեն, առավելապես՝ վերջնարդյունքների և կատարման չափանիշների վերաձևակերպման իմաստով:

Կրթական ու այլ նպատակների իրականացման համար քոլեջն ապահոված է անհրաժեշտ և արհեստավարժ մարդկային ռեսուրսներով: Սակայն, դասախոսների տարիքային կազմը ռիսկային է և չի նպաստում քոլեջի կրթական և այլ գործընթացների արդիականացման համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը: Քոլեջում արդեն տարվում են որոշակի աշխատանքներ պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ:

Կրթական վերջարդյունքերի ձևավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն ու նյութատեխնիկական ռեսուրսները բավարար չեն:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Քոլեջում ռազմավարական կառավարման մշակույթը ներդրվել է վերջին տարիներին, որի շնորհիվ աստիճանաբար ներմուծվում են արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարման տարրեր:

Քոլեջի առաքելության մեջ շնորհվող ոչ բոլոր որակավորումներն են հստակ արտահայտված:

Քոլեջի կառավարման ու վարչարարության գործընթացում մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները թերի են, բարելավման մեխանիզմները չեն գործում:
Դասախոսների մեծ մասը ներգրավված է կառավարման տարբեր մակարդակներում և տիրապետում է գործընթացների վերաբերյալ տեղեկատվությանը:
Քոլեջում գործում է դասախոսների պարբերաբար վերապատրաստումների գործընթաց՝ լիազոր մարմնի կողմից: ներդրված է հաշվետվողականության համակարգ հստակ ժամանակացույցով:
Որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է: Կառավարման համակարգը կարևորում է և միտված է որակի բարելավմանը: Քոլեջի ներքին շահակիցները նույնպես տեղեկացված են և կարևորում են որակի ներքին ապահովման գործընթացները: Վերջին 3 տարիների ընթացքում բավականաչափ կազմակերպչական աշխատանքներ են իրականացվում որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը.***

Քոլեջը չունի հետազոտության ոլորտում իր հավակնություններն ու հետաքրքրություններն արտահայտող քաղաքականություն, որը կհամապատասխաներ ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչներին:
ՎՊԳՔ-ի հետազոտական միջավայրը դեռևս չի համապատասխանում զարգացման նպատակներին, չկան հետազոտական ոլորտի ձևակերպված ուղենիշեր: Կրթության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմներ մշակված չեն:
Քոլեջում դեռևս աշխատանքներ չեն տարվում միջազգայնացման ուղղությամբ, իսկ արտաքին կապերի ոլորտում իրականացված աշխատանքները շատ թույլ են:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերությունններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագրի մեծ մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Ծրագրով սահմանված արդյունքների ձեռքբերումը կարող է նպաստել քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում առկա խնդիրների լուծմանը՝ երաշխավորելով հաստատության կայուն առաջընթացը:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում.

## ՈՐՈՇԵՑ

1. **«Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **«Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

➢ քոլեջի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի քանակական ցուցիչներ ունենալու պահանջը,
➢ քոլեջի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,
➢ որակի ապահովման մեխանիզմների ու գործիքակազմի լրամշակման և քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառման անհրաժեշտությունը:

3. Հատուկ ուշադրություն դարձնել՝
   ➢ ռազմավարական ծրագրում վերջնարդունքների հստակ ձևակերպմանը, չափելի որակական և քանակական ցուցիչների սահմանմանը,
   ➢ հետազոտական բաղադրիչի ներդրման և հետազոտության խրախուսմանը,
   ➢ մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ընդլայնմանը,
   ➢ կրթության և հետազոտության փոխկապակցմանը,
   ➢ ուսանողների և դասախոսների շրջանում ուսանողակենտրոն ուսուցման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,
   ➢ ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

**Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ** — **Ա. Սաղյան**

2021 թ., մայիսի 5

ք.Երևան